ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՅՑԵԼԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2 հունիսի 2000 թ.:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիա, հանդիպում ունեցավ ակադեմիայի նախագահության անդամների, ակադեմիական ինստիտուտների տնօրենների հետ:

«Հայ Եկեղեցին միշտ եղել է մշակույթի և գիտության մշտական պաշտպանը»,- ողջունելով Հայոց Հայրապետի անդրանիկ այցը ակադեմիա՝ փաստեց ԳԱԱ նախագահ Ֆադեյ Սարգսյանը, Վեհափառ Հայրապետին ներկայացնելով ակադեմիայի վերջին շրջանի գործունեությունը: Իբրև անդրանիկ այցի հիշատակ պրն Սարգսյանը Վեհափառ Հայրապետին հանձնեց Սիսիանի տարածքում հայ հնաբանների կողմից պեղված մ.թ.ա. 18-րդ դարի մի անոթ:

«Հայոց Հայրապետները միշտ էլ սերտ կապերի մեջ են եղել կրթական և գիտական օջախների հետ, առանձնակի գնահատանք և սեր տածել դեպի գիտական աշխարհի մշակները, իսկ մեր նախորդ երկու Հայրապետերը եղել են նաև գիտական այս օջախի անդամները»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ վստահեցնելով, որ Եկեղեցին կշարունակի սատարել և օժանդակել գիտական մտքի զարգացմանը, որ կոչված է ծառայելու մարդկության բարօրությանն ու առաջընթացին: Այս առումով Նորին Սրբությունը կարևորեց ակադեմիայի դերակատարությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում և մասնավորապես կապը Եկեղեցու հետ՝ համոզմամբ, որ փոխադարձ զորակցությունը արդյունավետ կդարձնի թե՛ Եկեղեցու, և թե՛ գիտության առաքելությունը:

Ողջունելով Նորին Սրբության մտածումները՝ ելույթներով հանդես եկան նաև ակադեմիկոսներ Լևոն Հախվերդյանը, Սերգեյ Համբարձումյանը, Վլադիմիր Բարխուդարյանը, Կոստանդին Կարապետյանը: